

3808

Մ. Վ. ՍՏԱԼԻՆ

ՅԵ. ՎՈՐՈՇԻԼՈՎ

# Մ. Վ. ՖՐՈՒՆԶԵ

3 K 4

Մ-11

Պ Ե Տ Հ Ր Ա Տ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՑԵՐԵՎԱՆ • 1938

28 JUN 2005

կ. Կ.

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑՆՔ

3K4  
U-11

Ի. Վ. ՍՏՍԼԻՆ 20 NOV 2009  
Կ. ՅԵ. ՎՈՐՈՇԵԼՈՎ

Մ. Վ. ՖՐՈՒՆԶԵ

ՊԵՏԼՐՍ—ԲՍՂԱԲՍԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ  
ՀՐԱՏԱՐԱԿՁՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ ● 1938



5554  
38

И. В. СТАЛИН  
К. Е. ВОРОШИЛОВ  
М. В. ФРУНЗЕ

Аргивиз—Издательство  
полит. литературы  
Ереван, 1938

Ի. Վ. Մ Տ Ա Լ Ի Ն

Մ. Վ. Ֆ Ր Ո Ւ Ն Չ Ե Յ Ի Հ Ի Շ Ա Տ Ա Կ Ի Ն

(Հատ Մ. Վ. Ֆրունզեյի քաղմանը  
1925 թ. նոյեմբերի 4-ին)

Ընկերներ, յետ ի վիճակի չեմ յերկար խոսելու, իմ հոգեկան վիճակն այդ բանին չի տրամադրում ինձ: Միայն կասեմ, վոր հանձին Ֆրունզեյի մենք կորցրինք մեր ժամանակի ամենամաքուր, ամենաազնիվ, ամենաանվեհեր հեղափոխականներից մեկին: Կուսակցութունը հանձին ընկ: Ֆրունզեյի կորցրեց իր ամենահավատարիմ և ամենադիպլոմատիկ ղեկավարներից մեկին: Խորհրդային իշխանութունը հանձին ընկ: Ֆրունզեյի կորցրեց մեր յերկրի և մեր պետության ամենախիզախ և ամենախելացի շինարարներից մեկին: Բանակը հանձին ընկ: Ֆրունզեյի կորցրեց իր ամենաօրերի և ամենահարգելի ղեկավարներից ու ստեղծողներից մեկին: Ահա թե ինչու կուսակցութունն այնպես սզում ե ընկ: Ֆրունզեյի կորստյան առթիվ:

ԹԱՆԳԱԳԻՆ ԲԱՐԵԿԱՄ ՄԻՆԱՅԻԼ  
ՎԱՍԻԼՅԵՎԻՉ ՅՐՈՒՆՉԵՅԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Ընկերներ, այս տարին մեզ համար անեծք էր: Նա մեր միջավայրից խլեց մի ամբողջ շարք դեկավար ընկերներ: Սահայն այդ անբավարար թվաց և մեկ զոհի ես կարիք յեղավ: Թերևս դա հենց այդպես էլ պետք է, վորպեսզի հին ընկերներն այդպես հեշտ և այդպես սովորական ձևով դերեզման իջնեն: Յավուք սրտի, մեր յերիտասարդ ընկերները այդքան հեշտ և վուչ էլ այդքան սովորական ձևով չեն բարձրանում հներին փոխարինելու:

Սահայն պիտի հավատանք, պիտի հուսանք, վոր կուսակցությունն ու բանվոր դասակարգը ձեռք կառնեն բոլոր միջոցները, վորպեսզի դյուրացնեն նոր ընկերների կոփումը՝ հներին հերթափոխելու համար:

Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցության Կենտրոնական Կոմիտեն ինձ հանձնարարել է ամբողջ կուսակցության վիշտը հայտնել ընկ. Փրունզեյի կորստյան առթիվ: Թող իմ կարճ ձայնն արտահայտություն լինի այդ վշտի, վորն անսահման է և վորը կարող է յերկար ձառերի:

«Правда» 1925 թ. նոյեմբերի 5.

Անժամանակ ծանր կորուստն ազդում է չձեցուցիչ. մերձավոր մարդու հանկարծակի կորուստը բոլորովին ձնչում է...

Միրելի, սրտակից Միշայի մահը մեզ՝ նրա բարեկամների համար սարսափելի անսպասելիք էր:

Միխայիլ Վասիլյեվիչի հիվանդության մասին մենք բոլորս էլ լավ իրազեկ էլինք: Բայց վուչ ինքը՝ Միխայիլ Վասիլյեվիչը, վուչ մենք՝ նրա բարեկամները այդ հիվանդությունը լուրջ չէլինք համարում և համենայն դեպս այն վտանդավոր չէլինք համարում կյանքի համար:

Անցյալ տարվա աշնանը (հոկտեմբերին) մենք Միխայիլ Վասիլյեվիչի հետ միասին մեր արձակուրդի ամբողջ ամիսն անցկացրինք Ադրբեջանում վորսորդությամբ: Լեռներ, ձորեր և ընդհանրապես յուրահատուկ, դժվար անցանելի այն վայրը, ուր մենք

վորս եյինք անում, մեզ ամեն ընդհանուր ստիպում էր «ամբողջություններ» դրավել, և Միխայիլ Վասիլևիչը կրքոտ ու լավ վորսորդը՝ անընկճելի էր: Մենք լուսաբացին վեր կենալով, հաճախ միայն միջնադիրն եյինք վերադառնում ատու, վորպեսզի լուսաբացին կրկին շարժվենք դեպի նոր, նույնպիսի ժայռոտ և անզնդախոր տեղեր: Միանգամայն անհնար էր մտածել դիեռային կերակրի կամ քիչ թե շատ կանոնավոր սնվելու մասին: Մնվում էյինք «վոտաց վրա» — տեղական դյուրաբացիները կերակրով, բայց չնայած այդպիսի ապրելակերպին, այնուամենայնիվ Միխայիլ Վասիլևիչը կաղզուրովեց, ամբացալ և հրաշալի յեր գգում իրեն:

Այդ հանդամանքը մեզ ստիպեց ել ավելի հավատալ, վոր Միխայիլ Վասիլևիչը հիվանդությունն այնքան ել վտանգավոր չէ, թեև ոպերացիայի մասին վաղուց արդեն խոսակցություն կար:

Պարբերական հիվանդադին նուպաները, վորոնք Միխայիլ Վասիլևիչը մոտ հետևանք էյին չափից դուրս բազմաժամ աշխատանքի, վորոնք յերբեմն նրան կարճ ժամանակով շարքից հանում էյին, բայց ամեն անգամ չափազանց արագ լիկվիդացիայի էյին յենթարկվում, յերբ նա կարճատև դադար ու հանգիստ էր առնում:

Ընթացիկ տարվա հուլիսին Միխայիլ Վասիլևիչը յերկու անգամ ավտոմոբիլային աղետի յենթարկվեց, ընդվորում յերկրորդ անգամ բավական զգալի ջարդվածքներ ստացալ ճակատից, վոտքից և ձեռքից: Բայց և այնպես աղետից մի շաբաթ հետո բժիշկները Միխայիլ Վասիլևիչին թույլ ավին

վորսի դնալու: Խիստ բարդ ու ծանր աշխատանքների կարճատև դադարների ընթացքում նրա համար լավագույն ժամանցն ու հանգիստը վորսորդությունն էր: Յեւ արդեն ոգոստոսի 1-ը, յերբ Միխայիլ Վասիլևիչը հենց նոր էր ապաքինվել ջարդվածքներից, մենք նրա հետ ամբողջ որն անցկացրինք վորսորդությունում, Մոսկվայից 130 կիլոմետր հեռավորության դրա՝ ճահիճներում: Դրանից հետո Միխայիլ Վասիլևիչի տրամադրությունը վերստին դարձավ կայտառ ու կենսուրախ:

Սակայն ոգոստոսի վերջերին Միխայիլ Վասիլևիչին սկսում է ձեռքի ու վոտքի ցավից դանդատվել: Ավտոմոբիլային աղետի ժամանակ ստացած ջարդվածքները գուր չանցան: Ձեռքի ու վոտքի վրա սկսված տեղական բորբոքային պրոցեսները լիկվիդացիայի յենթարկելու համար հարկ յեղալ դիմել վերաբուժական միջամտության: Այն, վոր Միխայիլ Վասիլևիչը կարճ ժամանակով յեղալ հիվանդանոցում, բժիշկների հոգատարությունը իրենց գործը կատարեցին, և Միխայիլ Վասիլևիչը վերստին առողջ է ու լի յեռուն եներգիտով:

Սեպտեմբերի սկզբին Միխայիլ Վասիլևիչը դալլա է Մուխալատկա (Ղրիմ) հանգստանալու, նրա հետ է զինվորական բժիշկ ընկ. Մանդրիկան: Բժշկից մենք տեղեկանում ենք (այն ժամանակ Մուխալատկայում հանգստանում էյին Ստալինը, Ծիլերյատովը, յես և ուրիշ ընկերներ), վոր Միխայիլ Վասիլևիչին ութ որ շարունակ ներքին արյունաքամում է ունեցել և վոր այն տեղի յե ունենում, թեկուզ և թուլացած

ձեռով, նաև ներկայումս: Ինքը Միխայիլ Վասիլյեվիչը  
դրան մեծ նշանակութիւն չէր տալիս և արդեն յեր-  
կրորդ թէ յերրորդ-որը պատրաստվում էր վորսի դնալ  
Այ-Պետրի սարի շրջանը: Մենք նրան համոզում էինք  
չգնալ, քանի վոր նրա տեսքը դեռ բոլորովին առողջ  
չէր, առաջարկում էինք նախ ամրապնդել, ապա  
միայն վորսի դնալ: Բայց համոզելը չունեց, և մենք  
չորսով—Միխայիլ Վասիլյեվիչը, ընկ. Շկիրյատովը,  
բժիշկ Մանդրիկան և յես միքանի ժամ թափառում  
էինք Այ-Պետրի քարքարոտ լանջերում:

Չնայած անհաջող վորսին, Միխայիլ Վասիլյեվի-  
չը տառացիորեն վերածնվեց, ելի դարձավ նույն կեն-  
սուրախը, սիրալիրն ու կայտառը:

Այնուամենայնիվ Միխայիլ Վասիլյեվիչի Ֆիզի-  
կական վիճակի առթիվ բժշկի հայտարարութիւնը  
ստիպեց մեզ մտահոգվել նրա առողջութիւն մասին:  
Մենք բոլորս ել տեսնում էինք, վոր Միխայիլ Վա-  
սիլյեվիչին ամենից առաջ անհրաժեշտ է բացարձակ  
հանգստութիւն: Յես կտրականապես մերժեցի Մի-  
խայիլ Վասիլյեվիչի հետ վորսի դնալ, վերով, իհար-  
կէ, վշտացրի իմ բարեկամին: Բայց ինքը՝ Միխայիլ  
Վասիլյեվիչը չէր հանդատանում, նապաստակի վորս  
էր անում, դո՛ւ էր, արամազրված և յերազում էր իս-  
կական, մեծ վորսի մասին:

Բայց, ինչպես յերևում է, ստամոքս-աղիքային  
տրակտում արյունաքամումն իրեն զգալ էր տալիս:  
Միխայիլ Վասիլյեվիչն սկսեց տկարանալ և պառկեց:

Բժիշկ Մանդրիկան Մոսկվա մեկնեց, և այնտեղից  
յեկան բժիշկներ Ռուզանովն ու Կոտատկինը՝ սպա-

ուարկու կազմով: Մոսկվայում շտապ միջոցներ էին  
ձեռք առել Միխայիլ Վասիլյեվիչին բուժելու համար:

Մտրոջ յերկու շաբաթ Միխայիլ Վասիլյեվիչը  
դանջում էր բժշկական աշակուղջ հսկողութիւն ներ-  
քո, վորի հետեանքով բժիշկները հանգեցին այն հաս-  
տատ համոզմանը, վոր անհրաժեշտ է ոպերացիա կա-  
տարել:

Մոսկվայի բժիշկների գալը չափազանց վատ ազ-  
դեց Միխայիլ Վասիլյեվիչի վրա: Նա շարունակ ինձ  
ասում էր, թէ իրեն լավ է զգում, վոր տկարութիւ-  
նը շուտով կանցնի և այլն: Յեվ միայն այն ժամանակ,  
յերբ անայիզը հաստատեց չդադարող արյունհոսու-  
թիւն առկայութիւնը, Միխայիլ Վասիլյեվիչն սկսեց  
ավելի լուրջ վերաբերվել դեպի իր առողջական վիճա-  
կը և հակվել դեպի ոպերացիա կատարելու միտքը:

Սեպտեմբերի 29-ին Միխայիլ Վասիլյեվիչը մեզ  
հետ, Կենտկոմի անդամների հետ մեկնեց Մոսկվա:  
Մենք գնում էինք Կենտկոմի պլենում, իսկ նա՝ վոր-  
պեսդի հիվանդանոցում պառկի և շուտով ազատվի  
այդ արդեն ձանձրացրած և ծանր հիվանդութիւնից:  
Փորձութիւն չընան էր սպասում: Պառկելով հիվան-  
դանոցում՝ Միխայիլ Վասիլյեվիչը, ինչպես միշտ, ի-  
րեն չընապատեց սուսերեն ու Ֆրանսերեն գրքերով և  
համբերութեամբ սպասում էր բժշկական դիտողու-  
թիւնների արդյունքներին:

Մենք հաճախ և յերկար նստում էինք նրա մոտ  
Կրեմլի հիվանդանոցի 19-րդ պալատում: Այդ փոքրիկ  
սենյակը շուտով վերածվեց մի յուրահատուկ քաղա-

քական ակումբի, վերտեղ ըննվում և լուծվում էյին ամենաբարդ և ամենաբաղձազան հարցեր:

Միխայիլ Վասիլյեվիչի համար բնորոշ էր ամեն ինչ խմանալու, բոլոր դեպքերին տեղյակ լինելու և խոսքով ու դործով նրանց անձամբ մասնակցելու անհազանկությունը: Բարեկամներից նա պահանջում էր հաճախակի այցելելու մանրամասն ինֆորմացիա տալ, և մենք հաճույքով էյինք կատարում նրա ցանկությունը:

Մտույզ չեմ հիշում, հոկտեմբերի 7-ի և 10-ի միջև, մենք սովորականի համաձայն յերկար նստեցինք Միխայիլ Վասիլյեվիչի մոտ: Նրա մոտից դուրս դալով, բժշկից իմացանք, վոր այժմ 17 լալադույն բժիշկներ ու պրոֆեսորներ են հավաքվել կոնսիլիումի համար: Մենք չհամբերեցինք և հենց այդտեղ հարցրինք բժիշկ Ռոզանովի կարծիքն ոպերացիայի անհրաժեշտության մասին: Ռոզանովը վստահորեն պատասխանեց, թե ինքն «ոպերացիայի կողմնակից ե»: Ուշ յերեկոյան ինձ հաղորդեցին, վոր կոնսիլիումը միաձայն վորոշել է ոպերացիա կատարել:

Յես մեկնեցի իմ արձակուրդն ավարտելու, համոզված լինելով, վոր ոպերացիան բարեհաջող յելք կունենա: Յեվ ինչպես կարելի յեր անհանգստանալ, յերբ Ռոզանովն ու Կասատկինը, վորոնց հետ մենք հաճախ էյինք խոսում Միխայիլ Վասիլյեվիչի առողջության մասին, մեզ համոզում էյին, հավատացնում, թե անհանգստանալու վորևե հիմք չկա: Յես հավատացի այնպես, ինչպես հավատացինք մենք բոլորս, ինչպես հանգիստ և վստահորեն դանակի տակ պառ-

կելու գնաց մեր անմոռանալին, սքանչելիներից լավագույնը, բարեկամ և ընկեր Միխայիլ Վասիլյեվիչը:

Հոկտեմբերի 31-ին Սեվաստոպոլից կանչում են հեռախոսի մոտ, հաղորդում են ընկ. Մտալինի հեռագիրը: Իմանում եմ սարսափելի, հրեշավոր դույժը՝ «Փրունգեն այսոր վախճանվեց սրտի կաթվածից»... Ստակալի յե... Մազերս գլխիս վրա խլվում են. գիտակցությունս դիմադրում է ահավոր դույժն ըմբռնելու... Ինչպե՞ս: Ինչո՞ւ:

Բայց ընկեր Մտալինի հեռագիրն աչքիս առաջն է: Նա կանչում է անհապաղ: Ասել է թե ճիշտ ե... Մեկնում եմ, և ճանապարհին մտքերիս մեջ հերթով անցնում են այն մարդու հետ միատեղ կատարած ծանր ու հրճվալից աշխատանքի որերը, ամիսները և տարիները, վորն այժմ չկա, նրա հետ, վորին սիրում էյի յեղբոր պես, անցնում են նույնպես արագ, ինչպես աչքիս առաջ արագ անցնող լեռները:

Ահա նա, յերիտասարդ, կենսուրախ, պայծառ հայացքով ու թովիչ ժպետով Արսենին տասնիննը տարի առաջ: Իյանոյի-Վոդնեսենսկի և Շույայի պրոլետարների բոցաչունչ մարտիկն ու առաջնորդը, վոր նրանց ավանդարդի բուլճեիկների կողմից ուղարկված էր կուսակցության Ստոկհոլմի համադումարը:

Միխայիլ Վասիլյեվիչի հետ մենք միայն մեկ ամիս անցկացրինք, սակայն հիշողությանս մեջ նա մնաց ամբողջ կյանքումս:

Մեցավ 1A տարի, պայքարի, բանտերի, տաժանակրության ծանր տարիներ, և մենք կրկին հանդիպեցինք 1920 թ. աշնանը:

1-ին հեծյալ բանակն արագ յերթով լեհական ճակատից շարժվում եր դեպի վրանդելյան ճակատը:

Ստացվում է նոր հրամանատար ընկ. Ֆրունզեյի հրամանը բանակի յերթն արագացնելու մասին: Սեպտեմբերի վերջին նա խարկով խորհրդակցութեան և կանչում կամ ինձ կամ ընկ. Բուդեյոննուն: Ընկ. Բուդեյոննին չի կարող բանակից կտրվել, և յես շոգեքարչի վրա հասցնել սլանում եմ խարկով:

Գլխավոր հրամանատարի վազոնն է: Սեղանի շուրջն են գլխավոր հրամանատարը: Շտաբի պետ ընկ. Լեբեդեվը և... սա՛ր ով և—Ֆրունզեյն: Աչքերիս չեմ հավատում: Հրճվալից հանդիպում—Արսենին և Վալուդյան՝ հեղափոխութեամբ «վերամկրտված» և իրենց սեփական անուններն ու ազգանուններն ստացած: Սեղմում ենք մեկ մեկու ձեռք: Անսպասելի հանդիպումից յերկուսս ել հուզված ենք, ուրախ:

Ահա թե ով է Ֆրունզեյ—Միխայլովը, վորի մասին այնքան շատ պանծալի, առասպելի աստիճանի հասնող լուրեր ու համբավներ են լսվում: Ահա նա, Իվանովո-Վոդնեսենսկի և Շուլյայի ջուլհակների բուլչեվիկյան սանը:

Սեղանի վրա յե հսկայական քարտեզը, վորի վրա յերևում է, թե թշնամին, ոռւսական հեղափոխութեան վերջին թշնամին, տասնապատկված լիտիութեամբ փորձում է լայնացնել իր գործողութեանները շրջանը:

Մենք սկսում ենք քննարկել բարոն Վրանդելին վճռական և վերջին հարվածը հասցնելու ստրատեգիական պլանը:

Յե՛վ յերեկվա ընդհատակյա հեղափոխականը, բոլչեվիկ Արսենին գործնալի պարզութեամբ և խսկական շորալարի ապշեցուցիչ հեղինակութեամբ մանրամասնութուններով զարգացնում է Կարմիր Բանակի առաջիկա վճռական ոպերացիան:

Անչան դիտողութուններ, մտքերի կարճ փոխանակութուն—և պլանը, բուլչեվիկ Արսենի-Ֆրունզեյի ոպերատիվ պլանը հաստատված է:

Վրանդելի բախտը կանխորոշված է: Մի ամիս հետո նորից հանդիպում Միխայլի Վասիլյեվիչի հետ: Ավերված ու քայքայված յերկաթուղային կայարան, վորտեղ դեռ յերեկ վիտում է յին խուճապով փախած վրանդելականները:

Փոքրիկ սենյակում կիսախավարի մեջ հավաքվել են բոլոր բարձր գորապետները՝ Միխայլի Վասիլյեվիչի գլխավորութեամբ:

Թշնամին ջախջախված է, բայց մինչև վերջը ջարդված չէ:

Միխայլի Վասիլյեվիչը համբերութեամբ և ուշադիր լսում է բոլոր մերձավոր զինակիցների կարծիքները և հետագա գործողութունների համար տեղուտեղը վորոշումներ ընդունում: Իսկ մի տասն ու հետո մենք Միխայլի Վասիլյեվիչի հետ ամոմոմոմոմով արդեն սլանում ենք ազատագրված կարմիր Ղրիմի տերիտորիայով: Իսկ այնուհետև—այնուհետև իրար մոտեցնող, իրար հարազատ դարձնող յերկար աշխատանք:

Յե՛վ ահա նա չկա... Չկա ամենալավերից ավելի լավը: Մեռավ գորավար—առաջնորդը, մեռավ խոչո-

րագույն բուլղարիկ-քաղաքագետը, դադարեց բարա-  
խելուց բյուրեղի պես մաքուր սիրտը:

Իսկ կյանքն ընթանում է իր կարգով:

Այն գործը, վորին ծառայեց և իր կյանքը նվիրեց  
մեր անմոռանալի բարեկամը, առաջվա նման բոլոր  
ուժերի ու կամքի լարում է պահանջում: Կամքը մի  
ակնթարթ թուլացել է: Իսկ ո՞ւժը: Վո՛չ, ուժերը  
մեզնից չեն հեռացել: Յեվ մենք պնդում ենք՝ Միխա-  
յիլ Վասիլյեվիչի գործը ամբողջ աշխարհի պրոլե-  
տարիատի գործն է և այն կհասցվի հաղթական վախ-  
ճանին:

«Правда» 1925 թ. նոյեմբերի 11.

Մ. Վ. ՖՐՈՒՆԶԵՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ  
ԲԱՐԵԿԱՄ ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴ

Անմոռանալի Միխայիլ Վասիլյեվիչի մահվան  
որից անցավ մեկ տարի: «Ժամանակն ամենալավ  
բուժիչն է», ասում է առածը: Այո՛, կորստի սրու-  
թյունը, հոգեկան վերքերը, վոր հասցրեց Ֆրունզե-  
յի հանկարծակի մահը, դառնում են ավելի քիչ զգա-  
լի, թուլանում են: Այսպես է կյանքն իր որենքնե-  
րով: Սակայն Միխայիլ Վասիլյեվիչը պատկանում է  
այն մարդկանց կարգին, վորոնց կյանքը մարդկային  
պատմության անսահման յերկար ժամանակաշրջանի  
վրա թողնում է խորը անջնջելի հետքեր:

Անցավ մեկ տարի, ինչ մեռավ լավագույն կո-  
մունարներից մեկը, ազատամբաժ պրոլետարիատի  
զինված ուժերի կազմակերպիչներից ու ամենատա-  
ղանդավոր-բնածին զորավարներից մեկը: Չնայած  
վոր կորստի անմիջական սրությունն անցել է, սա-  
կայն մենք, նրա բարեկամներն ու աշխատանքի զե-  
նակիցները, ծանր, բայց շնորհակալ հեղափոխական  
աշխատանքի մեջ նրա ոգնականները, մինչև այժմ  
չենք ուզում հավատալ, թե այդ անզուգական մարդը  
և այդ սիրելի, սրտակից ընկերն այլևս չկա մեր մեջ:

Խոլոր նրանք, ովքեր յերբևե առիթ են ունեցել անմիջապես շփվելու Միխայիլ Վասիլյեվիչի հետ՝ սկսած կարմիր-բանակայինից, բանվորից ու գյուղացուց և վերջացրած մեր կուսակցութեան ու Խորհրդային պետութեան պատասխանատու աշխատողներով, նրա մասին պահպանում են ամենալավ, ամենապայծառ հուշերը: Յեւ այլ կերպ չի ել կարող լինել: Այդ արտասովոր, հմայիչ, նուրբ, բարեսիրտ մարդը տառաջիտրեն գյուլթիչ սպայվորութուն եր թողնում էր հետ բոլոր շփվողների վրա վոչ միայն խաղաղ պայմաններում, այլև ամենալարված, նույնիսկ հյուժող աշխատանքի ժամանակ:

Միխայիլ Վասիլյեվիչին յերբեք չեն մոռանա Խվանովո-Վոդնենսկի բանվորները, վորոնց մեջ նա քաղաքականապես աճեց, ձևավորվեց, անցավ պրոլետարիատի կուսակցութեան առաջին շարքերը և հետագայում դարձավ նրա ամենալավ ղեկավարներից ու առաջնորդներից մեկը: Մինսկի բանվորների ու զինվորների հիշողութեանից չի ջնջվի Միխայիլ Վասիլյեվիչի պայծառ դեմքը, Մինսկ, վորտեղ նրան վիճակվել էր աշխատել 1917 թ. սկզբին, ցարական ռեժիմի վերջնական քայքայման և հեղափոխական շարժման արիքի բարձրացման ժամանակաշրջանում:

Միխայիլ Վասիլյեվիչին վորպես իր հարազատ մերձավոր բարեկամի և առաջնորդի յե հիշում ամբողջ պրոլետարական ու չքավորական Ուկրաինան, վորտեղ նա վոչ միայն բարձր դորավարն ու զինված ուժերի կազմակերպիչն էր, այլև այդ հանրապետութեան խորհրդային ամբողջ շինարարութեան գործում

հավատարիմ և մշտական խորհրդատուն ու ոգնականն էր քայքայվածութեան ծանր տարիներին: Միխայիլ Վասիլյեվիչը թանգ է ու մոտ նաև Մոսկվայի բոլոր բանվորներին, վորոնք իրենց շարքերում նրան տեսել են 1917 թ. հոկտեմբերյան մարտերի ժամանակ և վորոնք հետագայում բազմիցս լսել են նրան, շփվելով նրա հետ զանազան ժողովներում ու միախնդներում: Վերջապես Խորհրդային պետութեան բոլոր աշխատավորները, արտասահմանի բոլոր առաջավոր բանվորներն ու գյուղացիները պիտի հարգեն Միխայիլ Վասիլյեվիչի, վորպես բանվոր դասակարգի ազատագրման գործին մինչև վերջ նվիրված ականավոր մարտիկի ու հեղափոխականի հիշատակը:

Միխայիլ Վասիլյեվիչ Փրունդեն նախքան մեր կուսակցութեան ղեկավարներից մեկը և Բանվորա-Գյուղացիական կարմիր Բանակի առաջնորդը դառնալը անցել է կյանքի դաժան ու տատակոտ ուղին: Բանտեր, ձերբակալումների ժամանակ գաղանային ծեծ, ցարական դատարան, վորը նրա նկատմամբ յերկու անգամ մահվան դատավճիռ էր հանել, յերկար ամիսներ շարունակ բանտային խոշտանգումներ—մահվան պատժի սպասելով, տաժանակրութուն և աքսոր, փախուստ, ուրիշ անուններով թափառում՝ ոխակ սնելով ամեն րոպե բռնվելու ցարական ուղրիչնիկները կողմից—այդ բոլորը չկարողացան կոտրել բոլլեկի-լենինյանի յերկաթե կամքը, բոլլեկի-լենինյան, վորը գիտակցաբար իրեն նվիրել էր կապիտալիստական լծից մարդկութեանը ազատագրելու մեծ գործին: Ընդհակառակը, ծանր փորձութունները

ԿԵԿ  
39



կոփեցին բոցաշունչ հեղափոխականի բնավորութ-  
յունն ու կամքը:

Միխայիլ Վասիլյեվիչը պատմության մեջ մտալի-  
րբև Կարմիր Բանակի ամենաակնառնավոր զորավարնե-  
րից ու առաջնորդներից մեկը: Նա ռազմական գործի  
մասնագետ չէր այդ բառի սովորական առումով:  
Միխայիլ Վասիլյեվիչը պրոլետարական ղինված ուժե-  
րի զորավար ու առաջնորդ դարձավ, անցնելով բոլ-  
չեիկ ընդհատակյա հեղափոխականի ծանր դպրոցը,  
վորն այդ անդուզական մարդու ռազմական դիտելիք-  
ների թերիները վերացնելու համար շատ բան տվեց:  
Հրաշք կարող է թվալ, վոր յերեկվա տաժանակիրը,  
հետամտվող փախտականը և քրոտրավայրի բնակիչը  
նախ դառնում է որինակելի ռազմական կազմակերպիչ  
Յարոսլավլի ուղրուգային կոմիտարի պաշտոնում, իսկ  
այնուհետև դիվավորում է դեռևս չամբացած, թույլ  
պրոլետարական պետությանն սպառնացող հակահե-  
ղափոխական ուժերի ջախջախման ամենապատասխա-  
նատու ուղերացիները:

Միխայիլ Վասիլյեվիչն ամենաազնիվ և ամենամա-  
քուր մարդն էր, և հենց այն հանգամանքը, վոր նա  
ձեռք զարկեց այնքան ծանր, այնքան պատասխանա-  
տու աշխատանքին, կարող է վկայել նրա խորը հա-  
վատն ինչպես դեպի այն դործը, վորի լուծմանը նա  
ձեռնարկեց, այնպես և դեպի իր ուժերը, վորոնց ուղ-  
նությամբ նա պետք է լուծեր այնքան պատասխա-  
նատու խնդիրը: Ուստի զարմանալի չէ, վոր Միխա-  
յիլ Վասիլյեվիչի անմիջական ուղնականը և մեր խոշոր  
ղինվորական մասնազետներից մեկը, վորն այդ շրջա-

նում աշխատում էր Միխայիլ Վասիլյեվիչի հետ և  
նրա ղեկավարությամբ, իր հիշողություններում ա-  
տում է. «Հավանորեն շատ քչերը դիտեն, վոր նա բա-  
նակի իր հրամանատարության առաջին իսկ որերից,  
այսինքն նշանակում է այնպիսի կարյերայից, վորն  
ըստ հին ժամանակի, հին զնահատականի հասնում  
էյին նախկին զինվորական մասնազետների զինվորա-  
կան կյանքի ու ռազմական աշխատանքի վերջում,  
նա բարձրանալով դեպի այն, առաջին իսկ որերից  
սկսեց այն իրադործել բառիս բուն իմաստով փայլուն  
կերպով, բառիս բուն իմաստով ռազմադիտության կա-  
նոններով, որենքներով, վորը տեսականորեն թերևս  
մատամբ նրան ծանոթ էր, բայց վորն իրադործելու  
թույլ էր տալիս նրան իր ռազմական հոտառությու-  
նը... Հետագա դեպքերը ցույց տվին, թե ինչ ար-  
ժե Բուզուրուսլանի հարվածը: Կոլչակը հորդում էր  
ամբողջ ճակատով, և հետագայում Կոլչակի դեմ ուղ-  
ղված պայքարը հանդիսացավ Բուզուրուսլանի հաղ-  
թանակի դավինիների վատտակում, խոշոր կամ փոքր  
ուժերով առաջխաղացում և վերավորված ու թունա-  
վորված զաղանի հետասյնդում»:

Ահա թե ինչպիսի խոսքերով է բնորոշում իր պե-  
տին ակնառնավոր զինվորական մասնազետ, հին ցարա-  
կան բանակի նախկին դեներալ, շատ բան տեսած  
Ֆ. Ֆ. Նովիցկին: Կարելի չէր բազմաթիվ մեջբերում-  
ներ անել այն լավատեղյակ մարդկանց ճառերից ու  
հուլիաներից, վորոնք անմիջականորեն դիտել են Մի-  
խայիլ Վասիլյեվիչի սքանչելի, տաղանդավոր ղեկա-

վարությունն արևելյան մարտական ուղերայիաներում :

Թշնամու շրջապատման ճիւղաններում խեղդվող Թուրքեստանյան հեղափոխական փոքրիկ բանակն արևելյան ճակատի հաղթական զորամասերի հետ վերամիացնելու ուղերայիան, վոր նա ծրագրեց և ապա փայլուն կերպով իրագործեց, Միխայիլ Վասիլևիչի ոգտին հաստատեց և ամրացրեց իսկուհան զորավարի ու հեղափոխական հաղթանակների կազմակերպչի համբավն ու փառքը :

Ուստի զարմանալի չե, վոր այն մոմենտին, յերբ հարավային հակահեղափոխութեան վերջնեկ բարոն Վրանդելը, վոր ամրացել եր Արիմի թերակղզում և յերազում եր Մոսկովյան զանգերի զնդուն զողանջների մասին, դուրս յեկավ իր ծուղակից և ակտեց հաջող ուղերայիաներ ծավալել կարմիր զորամասերի դեմ, — մեր կուսակցութեան կենտիոմը վրադիմիր Իլիչի գլխավորութեամբ հիշեց Մ. Վ. Ֆրունզեյի մասին :

Մեր կուսակցութեանը և խորհրդային կառավարութեանը Միխայիլ Վասիլևիչիին հանձնարարեցին արևմտա-յեփրոսական իմպերիալիզմի հետ սերտ կապերով կապված վրանդելյան վերջին հակահեղափոխական բանակի վերջնական ջախջախման ամենադժվար և ամենապատվալոր խնդիրը : Մեր յերկրի աշխատավորները և վոչ միայն մեր յերկրի, այլ ամբողջ աշխարհի աշխատավորները դիտեն, թե ինչպես Միխայիլ Վասիլևիչիը փայլուն կերպով զլուխ բերեց այդ բարդ մարտական ուղերայիան : Չե՞ վոր շնորհալի և յեռանդոտ սպիտակ զորավար-բարո-

նին շրջապատել Եյին հին, ցարական Ռուսաստանի լավագույն ռազմազետներն ու զինվորական հրամանատարները : Բարոն Վրանդելը և նրա ռզնականները ռազմական գիտութեան ու տեխնիկայի բոլոր նվաճումներն ու միջոցները գործադրեցին, վորպեսզի իրենց զավթած Արիմը ձեռքից չսան, բայց Միխայիլ Վասիլևիչի փայլուն ռազմական հանձարով դեկավարիող կարմիր զինված ուժերը կործանիչ հարվածով վորպես թղթյա տնակներ ցաքուցրել արին հակահեղափոխական զորքերը, և բարոն Վրանդելի ու նրա զենեքալները յերեկվա բարձրագույն մարտական համբավից մնացին լուկ խղճուկ հիշողութեաններ :

Բոցաշունչ բուլեիկ Միխայիլ Վասիլևիչիը հանդիսանում ե Ռուսաստանի մեծ պրոլետարիատի իսկական դավակը : Կարմիր զենքով ձեռք բերված ռազմական փառավոր հաղթանակները նրան գլխապատույի չեն բերում : Նա մնում ե նույն հանդիստ, համեստ մարդը, միայն նրան հատուկ ժպիտով ու մանկան պես պարզ, հիանալի աչքերով : Նա մնում եր մեծ կոմունիստական կուսակցութեան որինակելի անդամը, պատրաստ կատարելու իրեն հանձնարարված աշխատանքն ու ամեն մի գործ, վորքան ել այն դժվար լինի : Կուսակցութեան կողմից նրան տրված ամեն մի աշխատանք, անկախ նրա բնույթից ու ծավալից, և կուսակցական ամեն մի գործ, մեծ թե վոքըր, նա կատարում ե ամենայն յեռանդով ու խանդավառութեամբ, վորն իսկական կուսակցականի հատկանշական դիժն ե հանդիսանում :

Քաղաքացիական մեծ պատերազմն ավարտված ե :

Միխայիլ Վասիլյեվիչն անցնում է Ուկրաինայում և Ղրիմում գտնվող զինված ուժերի գլուխը: Աշխատանքի, և այն ել ամենածանր աշխատանքի անսահման ասպարեզ: Հարկավոր է զորացրել, արձակել հարյուր և հարյուր-հազարավոր բանվորներ ու դյուղացիներ: Իսկ ի՞նչպես անել այդ, յերբ տրանսպորտը դրեթե չի գործում, վառելիքը բացակայում է, յերկաթուղային գծերը ձյունապատված են, կարմիր զորամասերը կայազորներում կիսամերկ են, սոված, իսկ Ուկրաինայում չնազայլի նման թափառում են Մախնոյի, Տյուտյունիկի բանդաները և հակահեղափոխության բազմաթիվ այլ հրոսակախմբեր, վորոնք քանդում են առանց տյն ել քայքայված յերկրի տնտեսությունը և ձախողում են խորհրդային շինարարությունը:

Միխայիլ Վասիլյեվիչն այդ դժվարություններից չէվախեցավ: Իրեն հատուկ սառնասրտությունը և դեպի ինքն ու գործն ունեցած վստահությունը մյուս ընկերների հետ միասին նա սկսում է բանակի զորացրման, խորհրդային իշխանության ամրապնդման, խորհրդային որինականության հաստատման, տնտեսության վերականգնման վիթխարի աշխատանքը, կարճ ժամանակում խիստ զգալի արդյունքների հասնելով: Միևնույն ժամանակ նա սկսում է խորհրդային Ուկրաինայում հսկայական չափեր ընդունած և մեծագույն աղետ դարձած բանդիտիզմը լիկվիդացիայի յենթարկելու պլանաչափ, Ֆրոնդեյարար ծրագրված աշխատանքը: Ինչպես ամեն բանում, այնպես ել բանդիտիզմի դեմ մղվող պայքարում ընկ. Ֆրոնդեն չեր

բավարարվում միայն պլաններ և ընդհանուր դիրեկտիվներ մշակելով: Նա անձամբ ինքն է գնում բանդիտիզմով ամենից շատ վարակված վայրերը և ամբիջականորեն ղեկավարում նրանց դեմ մղվող պայքարը: Մեկ անգամ Պոլտավայի չըջանում նրան վիճակից բաղխվել Մախնոյի բանդաների հետ և շնորհիվ իր սքանչելի սառնասրտությունը և իսկական անաղմկարար քաջությունն ու հնարամտությունը, հաջողից խուսափել վերահաս կորստից: Շատ տեղերում գնդակով ծակծկված շինելն ու գլխարկը և վերավորված ձին վկայում էյին այն դրություն լրջության մասին, վորի մեջ եր ընկել Միխայիլ Վասիլյեվիչը:

Խորհրդային Ուկրաինան այդ ամենաականալոր մարդու տաղանդը դնահատեց ըստ արժանույն: Միխայիլ Վասիլյեվիչը միաժամանակ Ուկրաինայի ու Ղրիմի զորքերի հրամանատարն եր և խորհրդային Ուկրաինայի ժողկոմխորհի նախագահի տեղակալը, ընդամին քաղաքացիական աշխատանքին նա քեչ ուժ և ժամանակ չեր նվիրում:

Այն հանգամանքը, վոր Միխայիլ Վասիլյեվիչն իրբ և խորհրդային Ուկրաինայի կառավարության ներկայացուցիչը մեկնում է իմպերիալիզմի դեմ մարտընչող Քեմալ-պաշայի Թյուրքիան, մի ավելորդ անդամ ևս վկայում է այն հսկայական վստահության մասին, վոր ուկրաինական ընկերները կողմից վայելում էր անմոռանալի բարեկամ Միխայիլ Վասիլյեվիչը: Քեմալ-պաշան և նոր Թյուրքիայի մյուս գործիչները մեծ հարգանքով էյին արտահայտվում Միխայիլ

Վասիլյեվիչի մասին, հանձին նրա տեսնելով Խորհրդա-  
դային պետութւյան ռազմական և հասարակական խոչոր  
զործ չի:

Վերջապես 1924 թ. կուսակցութեանը Միխայիլ  
Վասիլյեվիչին դնում ե ԽՍՀՄ Ռազմա-հեղափոխական  
Խորհրդի նախագահի տեղակալի պատասխանատու  
պոստում: Այդ նշանակումն արդեւոք եր զինված  
ուժերի դրութեան ու կառուցվածքի մեջ հայտարար-  
ված խոչոր թերութեանները: Միխայիլ Վասիլյեվիչը  
ձեռնամուկ ե լինում Կարմիր բանակը վերակազմելու  
չափազանց ծանր ու ծայր աստիճան անհրաժեշտ աշ-  
խատանքին: Հետեւելով իր մշտական պլանին («նախ  
ծանոթացիր, ուսումնասիրիր, ապա գործիր»), նա այդ  
խոչոր աշխատանքում ևս ծանոթանում ե տվյալների  
հետ, ուսումնասիրում ե դրանք և ապա նախադժում  
ու մշակում ե ինչպես Կարմիր բանակի կենտրոնական  
ու տեղական ապարատները, այնպես ել ԲԳՎԲ մի շարք  
այլ բնադավառները վերակազմելու մանրամասն  
պլանը:

Ամբողջ 1924 թիվն անցնում ե այդ աշխատան-  
քում: Վերակազմումն ալարտվում ե հաջողութեամբ,  
և նրա հետեւանքներն արագորեն յերևում են կառա-  
վարման որդանները աշխատանքների ձգբրտման մեջ,  
զինվորական որդանիզմի տարբեր մասերի փոխադրե-  
ցութեանների պարզութեան մեջ և Կարմիր բանակի  
մարտունակութեան ընդհանուր բարձրացման մեջ: Դրա  
հետ միասին Միխայիլ Վասիլյեվիչը վորոշակի ու հիմ-  
նավորապես դնում ե տերիտորիալ շինարարութեան հե-

տագա ծավալման և ամրապնդման հարցը: Իր ձեռ-  
նարկումների մեջ վոչ մի բան չեր կարող չեղել Մի-  
խայիլ Վասիլյեվիչին նրա կողմից միանգամ արդեն  
նախադժված ու մտածված ուղուց—վոչ կասկածող  
բարեկամների ծուռ ժպիտները, վոչ թշնամիների չա-  
րախինդ Փշշոցները, վորոնք տերիտորիալ շինարա-  
րութեան մեջ զինված ուժերի լիկվիդացիան ելին  
տեսնում, վոչ հրամանատարական և քաղաքական  
կազմի թույլ համակերպվածութեանը կարմիր զորա-  
մասերի ստեղծման դեռևս այդ նոր, գործնականում  
չստուգված մեթոդին: Միխայիլ Վասիլյեվիչն արհա-  
մարհում եր այս ամենը և հաստատ կերպով առաջ եր  
ընթանում իր նախանշած ուղիով: Այդ աշխատանքում  
ևս, ինչպես և այն ամեն բանում, ինչ անում եր նա,  
հսկայական արդեւոքները հասավ: Այժմ մենք կա-  
րող ենք ասել, վոր նաև տերիտորիալ շինարարու-  
թեան մեջ նա բացարձակապես իրավացի յեր: Մեր  
տերիտորիալ զորամասերն աճեցին իբրև մի կազմա-  
կերպված հզոր ուժ, վորը վոչնչով չի զիջում մեր  
բանակի կազրային զորամասերին:

1925 թ. հունվարին Միխայիլ Վասիլյեվիչը նշա-  
նակվում ե Ռազմական և Ծովային գործերի ժողկոմ  
և ԽՍՀ Միութեան Ռազմա-հեղափոխական Խորհրդի  
նախագահ: Այդ ամենապատասխանատու պոստում  
Միխայիլ Վասիլյեվիչը շարունակում ե զինվորական  
զերատեսչութեան վերակազմված ապարատների ուժե-  
ղացման, նրանց աշխատանքի վորակի բարձրացման,  
այլև ինչպես բանակի, նույնպես և ամբողջ պետու-

Թյան մարտունակության բարձրացման յեռանդուն աշխատանքը:

Տեղը չե այտեղ թվել այն ահուելի թվով հարցերը, վոր ընկ. Ֆրունզեն հարուցել և դրել և կուսակցության ու կառավարության առաջ, հարցեր, վորոնց մի մասն ինքն անձամբ և կիրառել, իսկ մյուս մասն այժմ կենսադործվում և զինվորական գերատեսչության կողմից: Միայն պետք և ասել, վոր այն հսկայական խնդիրները, վոր լուծման եր դնում այդ անզուգական մարդը, զինվորական շինարարության մեջ նոր շրջան բաց արին: Նրա ավանդները մեզ, նրա ընկերների համար մինչև այժմ ել մնում են անխախտ և պիտի կիրառվեն հողուտ Բանվորա-գյուղացիական Կարմիր բանակի և մեր Խորհրդային պետության:

Այն նշանաձողերը, վոր Միխայիլ Վասիլևիչը դրել և մեր պետության զինված ուժերի զարգացման ճանապարհին, այտուհետև ել մեզ իբրև ցուցում կծառայեն, թե ինչ ուղղությամբ պետք և գնալ այն նպատակներին հասնելու համար, վորոնք թանդ են մեզ համար, վորոնց ծառայեց Մ. Վ. Ֆրունզեն, նվիրաբերեց այն բոլոր լավը, ինչ ուներ կյանքում, և հենց իր կյանքը:

Մեր բարեկամին, Կարմիր բանակի առաջնորդին և ամրակուռ բուլեիկ-լենինյանին արժանի հուշարձան կլինի Կարմիր բանակի—պրոլետարական պետության լազաղ աշխատանքի այդ պատվարի մարտական հզորության ամրացման մեր մշտական ու անդադրում աշխատանքը:

«Правда» 1926 թ. հոկտեմբերի 31-ին

Մ. Վ. ՖՐՈՒՆԶԵՅԻ ԻՆՔՆՍ.ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ\*

Յեա ծնվել եմ 1885 թ. Թուրքեստանի յերկրամասի Սեմիրչենսկի մարզի Փիչիեք քաղաքում: Իմ հայրը ծաղումով Խերսոնի նահանգի Տիրասպոլի դավառի Ջախարյանի վոլոստի գյուղացի յե: Ազգությամբ մոլդավան: Չինվորական ծառայության մըտնելու ժամանակ ուղարկվեցի Թուրքեստանի զորքերի կազմում ծառայելու: Չինվորական ծառայությունը վերջացնելուց հետո մնացի Սեմիրչենսկում, վորտեղ ծառայում էյի իբրև բուժակ: Իմ մայրը Վորոնսկի նահանգի գյուղացիներից և, վորոնք 70-ական թվականներին տեղափոխվել են Սեմիրչենսկ:

Դպրոցում նախնական կրթություն ստանալով, մտա Վերնո քաղաքի գլխնաղխան, վորն և ավարտեցի 1904 թ.: Գլխնաղխան ավարտելուց հետո մտա Պետերբուրգի սոլիտեխնիկ ինստիտուտը: Հեղափոխական գաղափարներին առաջին անգամ ծանոթացա տակավին

\* Գրված և 1921 թ. ՈՒՆՍՀ Ժողովուրդին առընթեր ՈՒՍՁ հրատարական և Ծովային գործերի Ժողովրդական կոմիտարի լիազոր և Ուկրաինայի ու Ղրիմի զորքերի հրամանատար յեղած ժամանակ:—Խմբ.:

դիմնադրիայում յեղածս ժամանակ, վերտեղ մասնակցում եյի ինքնակրթության խմբակներում: Համալսարանական կյանքի առաջին տարիվանից մտա սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան կազմակերպութեան մեջ: Ուսանողութեանս առաջին շրջանում հենց միանգամից հարեցի բուլչեիկյան շարժման հոսանքին:

1904 թ. վերջերից սկսեցի սկստիվ մասնակցութիւն ունենալ բուլչեիկյան դանազան կազմակերպութիւններում: 1905 թ. սկզբին սկսեցի աշխատել Իվանով-Վոդնեսենսկի արդյունաբերական շրջանում: Յեղել եմ մանածագործների 1905 թ. հայտնի գործադուլի կազմակերպիչներէց ու ղեկավարներից մեկը, գործադուլ, վորն ընդգրկել եր Իվանով-Վոդնեսենսկի ամբողջ արդյունաբերական շրջանը: Իվանով-Վոդնեսենսկի կոմիտեյի կողմից յեղել եմ ՌՄԴԿ Ստոկհոլմի միացուցիչ համադումարի պատգամավոր: Յեղել եմ Իվանով-Վոդնեսենսկի ուղրուգային կազմակերպութեան կազմակերպիչը, իսկ հետո կազմակերպիչը ՌՄԴԿ Իվանով-Վոդնեսենսկի միութեան, վորն ընդգրկում եր ինչպես Իվանով-Վոդնեսենսկի քաղաքային կազմակերպութիւնը, այնպես ել Իվանով-Վոդնեսենսկի ամբողջ արդյունաբերական շրջանը (Իվանով-Վոդնեսենսկ, Շուլյա, Կիննչմա, Տեյկովս, Ռոդնիկի, Յուրեյեվեց, Յուժա և այլն):

1904 թ. սկսած մինչև 1907 թ. սկիզբը բազմիցս յենթարկվել եմ ձերբակալութիւններին: 1907 թ. սկզբին ձերբակալել եմ Շուլյա քաղաքում: Դատվել եմ ՌՄԴԿ (բուլչեիկների) պատկանելու մեղադրանքով

և դատապարտվել եմ 4 տարիա տաժանակիր աշխատանքի: Պատիժը կրելու ընթացքում նորից պատասխանատվութեան եմ կանչվել վոստիկանութեանը զինված զիմադրութիւնն ցույց տալու գործով: Դատվեցի և դատապարտվեցի մահապատժի: Նկատի ունենալով հանցանշանների լիակատար բացակայութեանը, դատավարական մի շարք և ակնհայտ խախտումները, զլխավոր զինվորական դատարանի կողմից դատավճիռը բեկանովեց և նշանակվեց նոր ըննութիւն: Յերկրորդ անգամ դատվեցի և նորից դատապարտվեցի մահապատժի՝ տաժանակիր աշխատանքների փոխարինումով: 6 տարի տաժանակիր աշխատանք տվին՝ ավելացնելով նախորդ պատժի ժամկետին: Պատիժս կրեցի Վլադիմիրսկի կենտրոնական, Նիկոլայեվսկի կենտրոնական և Ալեքսանդրովսկի կենտրոնական (Սիբիրում) տաժանակրային բանտերում: Ջեղչում կերտուելու կապակցութեամբ 1914 թ. վերջին դուրս յեկա վերաբնակվելու Իրկուտսկի նահանգի Վերխուլենսկի դալառում: Կազմակերպութիւն ստեղծելու պատճառով 1915 թ. ամառը նորից բանտարկվեցի: 1915 թ. ողոստոսին բանտից փախա և Վ. Գ. Վասիլենկո ազգանվան տակ անլեզալ աշխատեցի Անդրբայկալյան մարզում:

1915 թ. վերջին միքանի ընկերների հետ միասին ստեղծեցի «Восточное обозрение» մեծ շաբաթաթերթը և նրա խմբագիրներից մեկն եյի: Պահնորդական բաժանմունքի կողմից յերևան բերվելով և յերջանիկ պատահութեամբ ձերբակալումից փրկվելով փախա Ռուսաստան: «Միխայլով» ազգանվան տակ ընկա

Արևմտյան ճակատ՝ Համառուսական զեմստվային միությունը: Այստեղ աշխատում եյի անլեզալ հեղափոխական կազմակերպություն ստեղծել: Փետրվարյան հեղափոխության մոմենտին կանգնած եյի ընդհատակյա հեղափոխական կազմակերպության գլուխ, վորի կենտրոնը Մինսկումն էր, բաժանմունքներ ունենալով X և III բանակներում:

Փետրվարյան հեղափոխության սկզբից դարձա Մինսկի, Բելոռուսիայի և Արևմտյան ճակատի հեղափոխական շարժման ղեկավարներից մեկը: Անցկացրի Մինսկի վոստրիկանության և ժանդարմերիայի ղեկավարումը և դարձա Մինսկի քաղաքացիական միլիցիայի պետը: Յեղել/եմ Մինսկի բանվորական պատգամավորների խորհրդի կազմակերպիչը և գործադիր կոմիտեյի մշտական անդամը: Յեղել եմ Բելոռուսիայի գյուղացիական պատգամավորներին խորհուրդների կազմակերպիչը, անց եմ կացրել Բելոռուսական գյուղացիության յերկու համագումար: Յեղել եմ Բելոռուսիայի գյուղացիական պատգամավորների առաջին գումարման խորհուրդներին նախագահ և գործադիր կոմիտեյի նախագահ: Բելոռուսական մարզի կողմից յեղել եմ Համառուսաստանյան գյուղացիական պատգամավորների համագումարի նախագահության անդամ: Յեղել եմ Արևմտյան ճակատի բանակների համագումարի կազմակերպիչներից մեկը և համագումարի հետևանքով ընտրվել եմ Արևմտյան ճակատի բանակների ճակատային կոմիտեյի անդամ: Յեղել եմ Մինսկում հրատարակվող բուլչեիկյան թերթերի խմբագիրներէից մեկը («Звезда»): Կոռնիլովյան

որերին ճակատային կոմիտեյի և Մինսկի խորհրդի գործադիր կոմիտեյի միատեղ նիստի կողմից նշանակվել եմ Մինսկի շրջանի հեղափոխական գործերի շտաբի պետ:

Ոգոստոսի վերջերին մեկնեցի Վլադիմիրի նահանգի Շուլյա քաղաքը, վորտեղ բանվորներին, ղեկավորներին և գյուղացիներին պատգամավորներին խորհրդի նախագահը դարձա:

Ընտրվել եմ Շուլյայի քաղաքային դումայի նախագահ և Շուլյայի գավառի զեմստվային վարչության նախագահ:

Շուլյա քաղաքի կողմից ներկայացուցիչ եմ յեղել Պետրոգրադի զեմոկրատական խորհրդակցությանը:

Հոկտեմբերյան հեղափոխության մոմենտին անցա Շուլյայի-Իվանովսկի զինված ուժերի գլուխ և հոկտեմբերի 30-ին Մոսկվա բերի բանվորներին ու ղեկավորներին յերկու հազարանոց զինված մի ջոկատ: Անմիջական մասնակցություն եմ ունեցել Հոկտեմբերյան մարտերում: Իվանով-Վոդնեսենսկի նահանգ կազմակերպելուց դարձել եմ նահանգորդկոմի նախագահ: Ամբողջ ժամանակ յեղել եմ կուսակցության Շուլյայի գավառային կոմիտեյի և կուսակցության Իվանով-Վոդնեսենսկի նահանգային կոմիտեյի նախագահ:

Յեղել եմ խորհուրդների բոլոր համագումարներին պատգամավոր, յերկրորդից սկսած:

Վլադիմիրի նահանգից բուլչեիկների կուսակցության կողմից ընտրվել եմ Համառուսական սահմանադիր ժողովում:

1918 թ. դարնան և ամառվա ընթացքում նահանգ-  
գործկոմի նախագահի և կուսակցութեան նահանգկո-  
մի նախագահի պարտականութիւնները կատարելու  
հետ միասին յեղել եմ նահանգային ղինտորական կո-  
միտար և նահանգ-ժողովատիրոհի նախագահ: Յարու-  
լավլի ապտամբութիւնից հետո նշանակվեցի Յա-  
րոտլավլի օկրուզի օկրուզային ղինտորական կոմի-  
տար: 1918 թ. դեկտեմբերին Արևելյան ճակատի  
4-րդ բանակի հրամանատարի նշանակում տուցաւ:

1919 թ. ապրիլին կոլչակյան բանակի ամենաու-  
ժեղ հարձակման մոմենտին և Կաղանի, Սիմբերգի և  
Սամարայի համար ստեղծված սալառնայիքի ժամանակ  
նշանակվեցի Արևելյան ճակատի հարավային շրջանի  
չորս բանակների հրամանատար (4-րդ, 1-ին, Թուր-  
քեստանի և 5-րդ): Կազմակերպեցի և անցկացրի Բու-  
զուլուկի շրջանից հարձակվող կոլչակյան բանակների  
թևի դեմ ուղղված հարվածը, վորը ձախողեց Կոլչա-  
կի հարձակողական ուղերային և պատճառ դարձավ,  
վոր նրա բանակն արագ հետ քաշվի ամբողջ Արևե-  
լյան ճակատում:

Մնալով հարավային խմբի հրամանատար, ընդու-  
նեցի Ուֆայի ուղղութեամբ գործող Թուրքեստանյան  
բանակի անմիջական ղեկավարութիւնը: Անցկացրի  
Ուֆայի ուղերային և Բելայա դետն անցներով հու-  
նիսի 7—8-ին ջարդեցի հակառակորդի բանակը, վորը  
պաշտպանում եր Ուֆայի մատուցները, և հունիսի  
9-ին զրավեցի Ուֆան: Այս ուղերային համար  
պարզեատրվել եմ Կարմիր դրոշի շքանշանով:

Հունիսի վերջին նշանակվեցի Արևելյան ճակատի

բոլոր բանակների հրամանատար: Ղեկավարեցի ճա-  
կատի բանակների ուղերայինները մինչև այն մոմեն-  
տը, յերբ զրավեցինք Չեկյարինսկը և ամբողջ ճակա-  
տով անցանք Ուրալյան լեռները:

1919 թ. ոգոստոսին Արևելյան ճակատը յերկու  
ուղղութեամբ (Սիբիրյան և Թուրքեստանյան) բա-  
ժանվելուց, նշանակվեցի Թուրքեստանի ճակատի բա-  
նակների հրամանատար (11-րդ, 4-րդ 1-ին և Թուր-  
քեստանում գտնվող զորքերը): Սեպտեմբեր ամսվա  
ընթացքում անցկացրի դեներալ Բելովի հրամանատա-  
րութեան տակ գտնվող կոլչակյան հարավային բա-  
նակի շրջապատման և վոչնչացման ուղերային:  
Ուղերայինների հետևանքով վերականգնվեցին կա-  
պերը Թուրքեստանի հետ, և Որենբուրգի կազակու-  
թիւնն անցավ խորհրդային իշխանութեան կողմը:

Դեկտեմբերի ընթացքում ղեկավարեցի Ուրալյան  
ճակատի լիկվիդացիայի ուղերայինները, վոր և  
ավարտեցի դեկտեմբերի վերջին, Գուրչեվ քաղաքը և  
Կասպից ծովի ափերը մեր կողմից զրավելով:

Մնալով Թուրքեստանի ճակատի բանակների  
հրամանատար, նշանակվեցի Համառուսական Կենտրո-  
նական գործադիր կոմիտեի՝ Թուրքեստանի գործերի  
հանձնաժողովի անդամ, ինչպես և Ռիկ Կենտրոնական  
կոմիտեի Թուրքեստանի գործերի հանձնաժողովի  
անդամ:

1920 թ. փետրվարի 15-ից առ ոգոստոս աշխա-  
տել եմ Թուրքեստանում: Ղեկավարել եմ Սիմբերգեն-  
սկի սպիտակ-զվարդիական ճակատի լիկվիդացիայի  
ուղերայինները: Ոգոստոսի վերջին ղեկավարել եմ  
Բուխարայի եմիրութեան լիկվիդացիայի և Բուխա-

րայի ժողովրդական խորհրդային հանրապետութեան ստեղծման ուղեւորացիները: 1920 թ. սեպտեմբերին նշանակվեցի Հարավային ճակատի բանակները հրամանատար (ընդհեմ Վրանդելի): Նոյեմբերի վերջերին ավարտեցի հարավ-ուստական հակահեղափոխութեան լիկվիդացիայի ուղեւորացիան՝ դրավելով Ղրիմի թերակղզին:

Արտաքին ճակատները լիկվիդացիայի յենթարկելուց հետո նշանակվեցի հանրապետութեան Ռազմա-հեղափոխական խորհրդի լիազոր Ուկրաինայում և Ուկրաինայի բոլոր զինված ուժերի հրամանատար: Նոյեմբերյան Համաուկրաինական կոնֆերանսում ընտրվեցի Ուկրաինայի կոմունիստական բոլշևիկները կուսակցութեան Կենտրոնական կոմիտեյի անդամ:

Ուկրաինայի խորհուրդները համազումարի կողմից ընտրվեցի Համաուկրաինական Կենտրոնական գործադիր կոմիտեյի անդամ: Յեղեղ եմ բոլոր դոմարումների Համաուստական Կենտրոնական գործադիր կոմիտեյի անդամ, սկսած յերրորդից: ՌԿԿ X համագումարում ընտրվել եմ ՌԿԿ Կենտրոնական կոմիտեյի անդամ:

Այժմ աշխատում եմ Ուկրաինայում իբրև հանրապետութեան Ռազմա-հեղափոխական խորհրդի լիազոր և Ուկրաինայի ու Ղրիմի բոլոր զինված ուժերի հրամանատար:

М. В. Фрунзе, Собр. Соч., т. I, стр. 3—9



Թարգմ. Բ. Ն. Դավթյան  
Խմբագիր Ս. Հախոբյան  
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան  
Սրբագրիչ Հ. Մամվիլյան  
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արսվյան

Գրավիտի լիազոր № 3313, հրատ. № 591  
Պատվեր № 122, տիրաժ 5000,  
Հանձնված է արապորության 19/VII 1938 թ.  
Ստորագրվել է տպագրելու 10/VIII 1938 թ.  
Գինը 40 կ.

Պետհրատ—Քաղաքական գրականութեան հրատարակչութեան տպարան. Յերևան, Արավերդյան № 65

«Ազգային գրադարան»



NL0186073

ԳՐԱԸ 40 Կ. 433

Ի. Վ. ՏԱԼԻՆ  
Կ. Ե. ՎՐՈՇԻԼՈՎ

Մ. Վ. ՓՐՄՆԶԷ

Արմգիզ—Издательство полит. литературы  
Երևան, 1938